ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 08, 22.07.2022թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 21.07.2022թ. որոշում (որոշում ՈՐԽ0102-11/Լ) լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու և փակ բաժանորդագրությամբ տեղաբաշխում իրականացնելու միջոցով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրական կապիտալի ավելացման մասին (որոշումը կցված է):

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102 –11/L
Դաս: ՀՊ
«21» հուլիսի 2022թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲԱԺՆԵՏՈՄՆԵՐ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 47, 48, 84-ը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1 կետը և նպատակ ունենալով նոր բաժնետոմսեր թողարկելու ավելացնել Բանկի կանոնադրական կապիտալը՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. 05.09.2022թ.-ից մինչև 07.09.2022թ.-ը փակ բաժանորդագրությամբ տեղաբաշխել 112,614 (մեկ հարյուր տասներկու հազար վեց հարյուր տասնչորս) հատ լրացուցիչ բաժնետոմսեր:
2. Բանկի հասարակ (սովորական) անվանական մեկ բաժնետոմսի շուկայական գին սահմանել 24,819.4 (քսանչորս հազար ութ հարյուր տասնինն ամբողջ չորս տասնորդական) ՀՀ դրամ:
3. Տեղաբշխվող բաժնետոմսերի ձեռքբերման իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 21.07.2022թ.-ը:
4. Հաստատել Բանկի բաժնետերերին բաժնետոմսերի տեղաբաշխման պայմանները և բաժնետերերի նախապատվության իրավունքի վերաբերյալ դրույթներ պարունակող ծանուցման ձևը՝ համաձայն Հավելված 1-ի:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ · ARARATBANK OJSC · 02500518